ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՀԱՐՑԸ «ՄՈՒՐՃ» ԱՄՍԱԳՐՈՒՄ

Ռ. Ն. ՍԱՐԻՆՅԱՆ

Կապիտալիստական հարաբերությունների զարգացումն Անդրկովկասում հայ հասարակական մտքի առաջ ամբողջ սրությամբ դրեց պրոլետարիատի հարցը։ «Մուրճ» ամսագիրը առաջիններից մեկը անդրադարձավ այդ դասակարգի սոցիալական վիճակի պրոբլեմին, քննության առնելով բանվորների աշխատանքային պայմանների, տնտեսական դրության, սոցիալական ապահովագրության, կյանքի ու կենցաղի շատ հարցեր[1]։

Հասարակության դասակարգային ու սոցիալական հակասությունների պրոբլեմով ժամանակին զբաղվել են նաև XVIII դ. ֆրանսիական լուսավորիչներ Դիդրոն, Հոլբախը, Վոլտերը, Մոնտեսքյոն և ուրիշներ, որոնք ֆեոդալական հաստատություններն ու կարգերը համարում էին անբանական, հասարակության բոլոր դժբախտությունների պատճառը տեսնում հասարակական օրենքների զարգացումը «բանական օրենքների համաձայն» շրջանցելու մեջ։

Սոցիալական հակասությունների հարցը յուրովի էին լուծում տնտեսագիտական «ազատ դպրոցի» ներկայացուցիչները։ Ելնելով անհատականության սկզբունքից և ժխտելով ամեն մի օրենսդրական միջամտություն, նրանք կարծում էին, թե եկել է «բանական թագավորության» ժամանակաշրջանը և, իբր, տնտեսական կյանքում կատարյալ ազատությունը ինքնաբերաբար կլուծի դասակարգային, տնտեսական ու սոցիալական առկա հակամարտությունները։ Եթե տնտեսական առաջադիմության հարցում տնտեսական «լիբերալիզմի կարապետներ» Քենեն, Տյուրգոն, Սմիթն ու Ռիկարդոն չսխալվեցին, ապա սոցիալական հարցերի լուծման իմաստով նույնը չի կարելի ասել։

Ուշագրավ է, որ «Մուրճում» տպագրվող առանձին հեղինակներ չարիքների պատճառը որոնում էին հենց բուն կապիտալիստական հարաբերություններում։ Գ. Ղտրաջյանը խոսելով կապիտալիստական հասարակարգում դասակարգային սոցիալական անհավասարության, բանվոր դասակարգի տնտեսական ծանր վիճակի մասին, դրանք բխեցնում էր գոյություն ունեցող տնտեսակարգից, որ «թշվառության պատճառը ոչ այնքան աշխատանքի բնավորությունն է, որքան աշխատանքի հարստահարության ձևը»[2]։ Նշելով բուրժուազիայի հռչակած իրավական ու փաստական ազատության միջև գոյություն ունեցող հակասությունը, ամսագրի խմբագիր Արասխանյանը գրում

---

1 Երվանդ Ղազարյան, Բանվորների դրությունը Կարսում («Մուրճ», 1890, № 1), Գ. Ղարաջյան, Բանվորների ապահովացման խնդիրը (1894, № 1—4), Հ. Հակոբյան, Բանվորների հավաքական ապահովացումն Ռուսաստանում դժբախտ դեպքերից (1894, № 5—8), Ա. Արասխանյան, Բանվորական խնդիր. քննություն ներկայիս տնտեսական կարգի, տնտեսական և սոցիալական տեսակետից (1897, № 10—12), Գր. Վարդանյան, Խոշոր ձեռնարկությունների բնավորությունը և բանվորները (1894, № 4), Աշխատանքի տներ (1900, № 5—6) և այլն։

2 «Մուրճ», 1894, № 2, էջ 255։

էր. «Իհարկե, բանվորը իրավապես հավասար լինելով գործատուի հետ դաշն կապելու համար միևնույն ժամանակ չստացավ նույն տնտեսական ուժը, իրական այն ազատությունը, ինչ ուներ գործատերը։ Իսկական ազատությունը այն ժամանակ կլինի, երբ դաշն կապողներից ամեն մեկը մյուսի առաջարկները կարող լինի մերժել, առանց զգալի վնաս կրելու, բայց լիբերալ տնտեսական դրության մեջ իսկական ազատ պայմանագրության [մասին] գործատուի և գործառուի (գործատիրոջ և բանվորի) մեջ խոսք չի կարող լինել»։

Իրավական հարաբերությունները պայմանավորված են տնտեսական հարաբերություններով։ Բուրժուական լիբերալիզմի հռչակած հավասարությունն ուներ զուտ ձևական բնույթ, քանի որ արտադրության երկու գործոնները՝ արտադրության միջոցները և աշխատուժը տարբեր դասակարգերի սեփականություն են, հանգամանք, որը ինչպես տնտեսական, այնպես էլ իրավական անհավասարության պատճառն է։

Հայտնագործելով աշխատուժ-ապրանքը Կ. Մարքսը բացահայտեց կապիտալիստական շահագործման բովանդակությունը։ Կապիտալիստական հարաբերությունների մակերեսի վրա ստեղծվում է այն պատրանքը, թե բանվորը կապիտալիստին վաճառում է ոչ թե իր աշխատուժը, այլ՝ աշխատանքը։ Եվ պատահական չէ, որ բուրժուական կլասիկ տնտեսագիտության ներկայացուցիչները (Վ. Պետի, Ա. Սմիթ, Դ. Ռիկարդո) չնայած նկատեցին կապիտալիստների ու բանվորների տնտեսական գործարքի ապրանքային բնույթը, սակայն չըմբռնեցին դրա էության դրսևորման ձևի յուրահատկությունը, աշխատանքը հռչակեցին իբրև ապրանք և չկարողացան բացատրել կապիտալիստական շահույթի էությունը։

Արասխանյանը և նրա ամսագիրը սահմանափակվում էին միայն «աշխատանք-ապրանքի» և մյուս ապրանքների միջև տարբերություններ նշելով։ «Լիբերալ վարդապետության համաձայն, որն հաղթանակեց մեր դարում,— գրում էր Արասխանյանը,— բանվորի աշխատանքը հավասարվեց ապրանքի հետ. աշխատանքը մի ապրանք է, որ առաջարկվում է ցանկացողին որևէ գնով, ինչպես ամեն ուրիշ ապրանք։ Մինչդեռ այլ ապրանքները ծախողի անձնավորությունից անկախ մարդկային գործունեության արդյունք են, աշխատանքը ընդհակառակը հենց մարդկային գործունեությունը ինքն է և մարդուց անբաժանելի։ Ով կապիտալ է տոկոսով տալիս, հող է կապալով տալիս, բնակարաններ է վարձու տալիս կամ ապրանք է ծախում, նա դրանով իր տնտեսությունն է միայն շոշափում, բայց իր անձնավորությունը կատարելապես ազատ է մնում»[4]։

Ակներև է, որ Արասխանյանը «աշխատանքի» վաճառքը կապում էր բանվորի և կապիտալիստի միջև գոյություն ունեցող տնտեսական անհավասարության փաստի հետ, երբ բանվորը, չունենալով սեփական արտադրության միջոցներ «աշխատելու ուժը գործադրելու» համար, գործարքի մեջ էր մտնում կապիտալիստի հետ։

Արասխանյանն, իհարկե, գիտեր (1883 թ. նա իր դասախոսություններից մեկում հատուկ քննության է ենթարկել Կ. Մարքսի աշխատավարձի տեսությունը), որ աշխատուժի արժեքը և աշխատանքով ստեղծվածը տարբեր մեծություններ են։ «Մարդու տնտեսական բնությունը» հետազոտության մեջ նա

3 Նույն տեղում, 1897, № 10, էջ 1410։

4 Նույն տեղում, էջ 1411։

նկատում է, որ մարդը ինչպես և «բնական գույքերը»՝ հողը, ջուրը, անտառները և այլն «բնականորեն ազատ» են, բայց հասարակության զարգացման պատմական առանձին աստիճաններում (ստրկատիրություն, ճորտատիրություն), այն կորցնում է իր ուժերի օգտագործման սեփական իրավունքը՝ վերածվելով «տնտեսական գույքի մի ուրիշի համար», որից և շահում են աշխատուժի իրավական տնօրինողները։ Արասխանյանը նկատում է, որ կապիտալիզմի պայմաններում էլ իրավապես ազատ վարձու բանվորը տնտեսական ծանր պայմանների մեջ է, քանի որ նա «արտադրում է ավելի քան ինքը կարող է օգտվել» և այդ «ավելորդը» յուրացվում է «իբր ձրի աշխատանք»[5]։ Սակայն խուսանավելով «հավելյալ արժեքի» պրոբլեմից, նա գիտակցաբար չի խոսում աշխատանքի և աշխատուժի հիմնական տարբերությունների մասին և նկատում է այլ տարբերակիչ գծեր։ Նրա կարծիքով՝ աշխատանքի և այլ ապրանքների տարբերություններից մեկն էլ այն է, որ եթե մնացած բոլոր ապրանքների արտադրությունը կարելի է համաձայն առաջարկի ու պահանջարկի կարգավորել, ազդել տվյալ ապրանքի արտադրության չափերի ու գների վրա, ապա «աշխատանք-ապրանքը» այլ օրենքի է ենթարկվում։ «Մարդիկ ծնվում, աշխարհ են գալիս անկախ այն բանից, թե ավելի բանվորի պետք կա թե ոչ»[6],— գրում է Արասխանյանը։

Սկսելով կլասիկ տնտեսագիտության «աշխատանքն է ապրանք» սխալ դրույթից, նա, ի վերջո, հանգում է ֆրանսիական տնտեսագետ Ֆրեդերիկ Բաստիայի «ծառայություն ծառայության դիմաց» գռեհիկ սկզբունքին։ Պարզաբանելով «պահանջ և առաջարկ» հասկացությունների իմաստը, նա գրում է. «ապրանք ծախողը առաջարկում է ապրանք, հասարակությունը պահանջում է ապրանք, պահանջ չկա՝ նշանակում է գնող չկա. նույնպես գործարանատերը պահանջ ունի բանվորների, իսկ բանվորները առաջարկում են իրենց ծառայությունը»[7]։

Հայտնի է, որ կապիտալիզմի պայմաններում կապիտալի կուտակումը զուգորդվում է նրա օրգանական կազմի աճով։ Սակայն կապիտալի հաստատուն մասի համեմատությամբ փոփոխունը (չնայած քանակական աճին) հարաբերականորեն նվազում է, որի հետևանքով կրճատվում է աշխատուժի պահանջը։ «Մուրճը» տեսնում էր «աշխատանքային շուկայի» կապիտալիստական սահմանափակ հնարավորությունները, աշխատուժի զգալի մասի արտադրությունից դուրս մնալը։ Իհարկե, չի կարելի ասել, թե ամսաթերթն ու նրա խմբագիրը խորապես ըմբռնում էին ազգաբնակչության կապիտալիստական օրենքի բովանդակությունը, սակայն նրանք նկատում էին, որ այդ երևույթը ցայտուն է դրսևորվում տնտեսական ճգնաժամերի, տեխնիկական նոր գյուտերի, ինչպես նաև մրցակցության ժամանակ, երբ բնակչության մի հսկայական մասը դառնում է «ավելորդ»։ «Հաճախ է պատահել,— կարդում ենք «Մուրճում»,— որ տեխնիկական գյուտերը, տնտեսական կրիզիսները, փոքր ու միջակ արհեստանոցների ու գործարանների խախտումը մեծ գործարանների պատճառով, գալիս ու մեծ թվով բանվորների ավելորդ են դարձնում և նոցա ամենադառն չքավորության ու սովի տիֆին մատնում»[8]։

---

5 Գրականության և արվեստի թանգարան, «Մուրճ» ամսագրի ֆոնդ, բ. III, թ. 1։

6 «Մուրճ», 1897, № 10, էջ 1412։

7 Նույն տեղում, էջ 1404։

8 Նույն տեղում։

Տնտեսական մրցակցության սոցիալական հետևանքները քննարկել է նաև Գ. Վարդանյանը իր «Խոշոր ձեռնարկությունների բնավորությունը և բանվորները» հոդվածում։ Նա ևս չի տալիս գործազրկության պատճառների համակողմանի վերլուծությունը, բայց այդ երևույթը կապում է խոշոր գործարանների տեխնիկական կատարելագործման, մրցակցությանը չդիմացող մանրը ձեռնարկությունների արտամղման հետ։

«Մուրճը» տեսնում էր հարստության և աղքատության բևեռացման այն պրոցեսը, որը տեղի էր ունենում կապիտալիստական հասարակարգում, որոշ չափով նկատում, որ «լիբերալ տնտեսական սիստեմի մղիչ ուժը» շահն է և որ մասնավոր արտադրողների կապիտալիստական միությունում յուրաքանչյուրի նպատակը առավելագույն շահույթի արտադրությունն է, ուր «կապիտալները դիզվում են կապիտալների վրա»[9]։

Տնտեսական ճգնաժամերից առավելապես տուժում է բանվոր դասակարգը։ Տալով ճգնաժամերի ընդհանուր բնութագիրը, ամսագիրը գտնում էր, որ այդ ընթացքում «մեծամեծ կապիտալները մնում են անգործ, ապրանքները որ չի լինում ձեռնատու գներով ծախել, դիզվում են խանութներում, պահեստներում։ Գործարանները դադարեցնում են իրենց արդյունաբերական գործը մասամբ կամ ամբողջովին։ Բանվորները արձակվում են և ընկնում խեղճության մեջ։ Ինչո՞ւ։ Որովհետև շատ է արտադրվել։ Տնտեսական շրջանառությունը խանգարվում է, որով և տնտեսական առաջադիմության էներգիան կոտրվում է։ Եվ ինչո՞ւ։ Որովհետև եկամուտները շատ անհավասար են բաշխվում և ժողովրդի մի ահագին մասը գնելու, սպառելու ուժ չունի»[10]։

Այս բոլորը հիշեցնում է մանրբուրժուական տնտեսագետ Սիսմոնդուն, որը ելակետ ընդունելով Ադամ Սմիթի դոգման, հանգեց այն եզրակացության, թե՝ «ապրանքները գնվում են եկամուտներով», ըստ որի կապիտալիստական բաշխման հարաբերությունների կատարելագործման միջոցով հնարավոր է աճող հարստությանը զուգընթաց ավելացնել բնակչության եկամուտները և գնողունակության բարձրացմամբ շտկել արտադրության և սպառման միջև եղած հակասությունն ու վերացնել տնտեսական ճգնաժամերը։ Ստացվում է, թե, իբր, գերարտադրության տնտեսական ճգնաժամերի պատճառը բնակչության թերսպառումն է։ Պատահական չէ, որ այս տեսակետը հաստատելու համար «Մուրճը» վկայակոչում է գերարտադրության ճգնաժամերի թերսպառման տեսության կողմնակից գերմանական տնտեսագետ Ռոդբերտուսին։

Կապիտալիստական գերարտադրության գիտական բացատրությունն առաջին անգամ տվեց Կ. Մարքսը։ Նա ցույց տվեց, որ սկսած XIX դ. առաջին քառորդից տնտեսական ճգնաժամերը դառնում են կապիտալիստական վերարտադրության մշտական ուղեկիցը և առաջանում են արտադրության հասարակական բնույթի ու արդյունքի մասնավոր կապիտալիստական յուրացման միջև գոյություն ունեցող հակասության հետևանքով։ Թերսպառման տեսությունը համակողմանի քննադատության է ենթարկել Վ. Ի. Լենինը։ Արասխանյանը չընայած առաջարկում է բաշխման հարաբերությունները շտկել հենց կապիտալիստական արտադրահարաբերությունների պայմաններում, բայց և նկատում է, որ դա դյուրին գործ չէ։ Ըստ նրա՝ սխալվում են այն տնտեսագետները, ո-

9 Նույն տեղում, № 11—12, էջ 1604։

10 Նույն տեղում։

րոնք կարծում են թե՝ «ավելացած կապիտալներով» ընդլայնվում է արտադրությունը, նոր աշխատուժ է ներգրավվում արտադրություն, բարձրանում՝ աշխատավարձը և իջնում՝ ապրանքների գները։ Իրականում «նոքա (կապիտալիստները—Ռ. Ս.) ձգտում են համապատասխան չափով եկամուտ ավելացնել»[11]։

Նա քննադատում է տնտեսական լիբերալիզմի ներկայացուցիչներին, որոնց կարծիքով՝ «ազատ մրցումը» հանգեցնում է «հարուստի և աղքատի տարբերության» նվազմանը։ Արասխանյանը Գերմանիայի տնտեսական կյանքից վերցրած տվյալներով ցույց է տալիս, որ կապիտալիզմի պայմաններում գոյություն ունի եկամուտների խիստ անհավասար բաշխում։ Իսկ դա, նրա կարծիքով, մտածել է տալիս ոչ միայն սոցիալական արդարության, այլև նույնիսկ տնտեսական առաջադիմության տեսակետից։

Այսպիսով, եթե մի կողմից Արասխանյանը փորձում է ցույց տալ հարստության անհավասար բաշխումը կապիտալիստական հասարակարգում, ապա մյուս կողմից՝ այն օգտագործում է տնտեսական ճգնաժամերի թերսպառման տեսակետը հաստատելու համար։

«Մուրճը» նկատում է դասակարգային այն հակամարտությունը, որ առաջացրել է կապիտալիզմը։ Նրա խմբագրի կարծիքով թեև վերջինս խթանեց առաջադիմությանը կյանքի բոլոր ասպարեզներում, բայց և հասարակությունը տրոհեց երկու հակամարտ դասակարգերի ու «ստեղծեց մեծ անհավասարություններ ժողովրդի ահագին մեծամասնության և նրա փոքրամասնության միջև»[12]։

1894 թ. տպագրվում է Արասխանյանի հայտարարությունը «Մուրճ» անունով արհեստակցական ընկերություն հիմնելու մասին, որտեղ ասվում է՝ «Թիֆլիսի մի խումբ արհեստավորներ, մտածելով իրենց դասակարգի նյութական և բարոյական շահերի վրա»[13] որոշել են կազմակերպել փայատիրական հիմունքներով ընկերություն։ Ընկերության կազմակերպմանը ձեռնամուխ էր եղել Արասխանյանը։ Անդամագրվողը պետք է մուծեր 200 ռ.։ Ընկերությունը պիտի գործեր 12.000 ռ. ունենալուց հետո։ Մշակված կանոնադրության համաձայն՝ հավաքված դրամագումարով պետք է հող գնեին և արհեստանոցներ բացեին։ Յուրաքանչյուր տարվա վերջում ստացված շահույթի մի մասը դրամաշափին համապատասխան պիտի բաշխվեր անդամների միջև, իսկ մյուս մասն էլ օգտագործվեր ընկերության անդամների համար բնակարանների և էժանագին ճաշարանների շինարարության ու գրադարանների կառուցման համար։ Արասխանյանի այս փորձը նորություն չէր[14]։ Այն գերմանական մանրբուրժուական տնտեսագետ Գերման Շուլցե-Դելիչի փորձի կրկնությունն էր հայ իրականության մեջ, որի օգտակարության մասին բազմիցս գրվել է նաև «Մշակում»։ Շուլցե-Դելիչին թվում էր, թե արտադրական կոոպերատիվներում բանվորների

11 Նույն տեղում, № 10, էջ 1602։

12 Նույն տեղում, № 11—12, էջ 1605։

13 Նույն տեղում, 1894, № 11—12, էջ 1751։

14 Կոոպերատիվ շարժումը հին պատմություն ունի։ Դեռևս XIX դ. սկզբին ուտոպիստ սոցիալիստները կոոպերատիվները համարում էին այն միջոցը, որը հնարավորություն կտար առանց հեղափոխության անցում կատարելու կապիտալիզմից սոցիալիզմին։ Պրուդոնը կապիտալիստական հասարակարգի շարիքները փորձում էր վերացնել ժողովրդական բանկերի միջոցով։ Լասսալը փրկությունը տեսնում էր պետության օգնությամբ ստեղծվող արտադրական ասոցիացիաներում և այլն։

միացյալ աշխատանքը հնարավորություն կտար բավարարելու բանվոր դասակարգի «բոլոր պահանջները»[15]։

Կ. Մարքսը բազմիցս շեշտել է կոոպերատիվների միջոցով կապիտալիզմի վերափոխման անհնարինությունը, որ «հասարակական արտադրությունը ազատ և կոոպերատիվ աշխատանքի հսկայական ու ներդաշնակ սիստեմի վերածելու համար անհրաժեշտ են ընդհանուր սոցիալական փոփոխություններ, հասարակարգի հիմքերի փոփոխություններ, այնպիսի փոփոխություններ, որոնք կարող են ձեռք բերվել միմիայն հասարակության կազմակերպված ուժերի, այսինքն՝ պետական իշխանության, կապիտալիստներից և հողատերերից հենց իրենց արտադրողներին փոխանցվելու ուղիով»[16]։

Արասխանյանն ու նրա ամսագիրը, իհարկե, հեռու էին կոոպերատիվների մեջ սոցիալիզմի սաղմեր տեսնելու մտայնությունից և պատահական չէ, որ բանվորական հարցի լուծումը հնարավոր էին համարում հենց տիրող հասարակական հարաբերությունների պայմաններում։ Կապիտալիստական հարաբերությունների զարգացումն Անդրկովկասում ուղեկցվում էր բազմաթիվ մանր արտադրողների քայքայմամբ, որոնք, չդիմանալով խոշոր ձեռնարկությունների մրցակցությանը, վեր էին ածվում վարձու բանվորների։ Դա կապիտալիստական տնտեսակարգի օրինաչափությունն էր։ «Մուրճը» նկատում էր այդ երևույթը և բանվորական կոոպերատիվների միջոցով փորձում էր կանխել այն, չզգալով, որ այդ փորձն էլ բանվորներին մանր սեփականատերեր դարձնելու մի ծրագիր է։ Դա մինչ այդ կատարված բոլոր փորձերի նման ուտոպիական էր։ Ինչպես նկատում է Գևորգ Ղարաջյանը, թերևս այդ էր պատճառը, որ Արասխանյանի հիմնած կոոպերատիվը «մեռավ հենց իր սաղմի մեջ»[17]։

Հայտնի է, որ կանգնելով բանվոր դասակարգի հեղափոխական ուժին դեմ-հանդիման, բուրժուազիան սկսեց աշխատավորներին որոշ զիջումներ անել՝ բացելով աղքատանոցներ, հիվանդանոցներ, բանվորների երեխաների համար դպրոցներ, առանձին ձեռնարկություններում մտցվեցին բանվորների սոցիալական ապահովագրության օրենքներ և այլն։ «Մուրճում» տպագրվել են բազմաթիվ հոդվածներ, որոնցում նման բարեփոխումները համարվում էին բանվորական հարցի լուծման ամենառացիոնալ ուղին։

Տիրող հասարակական հարաբերությունները մերկացնող ուշագրավ մտքեր կան Գ. Վարդանյանի «Մուրճում» տպագրված հոդվածներում։ Նա բազմիցս անդրադարձել է կապիտալիստական տնտեսակարգի «պակասություններին»՝ դասակարգային հակասությունների, գործազրկության, աղքատության և այլ հարցերի։ Սակայն նրա սոցիալական քննադատությունը ակնհայտ է դարձնում այդ արատների վերացման ծրագրի ռեֆորմատորական բնույթը։ Վարդանյանը տեսնում էր բուրժուազիայի և պրոլետարիատի միջև առաջացած «բարոյական և տնտեսական» անդունդը և առաջարկում այն հարթել հասարակական հարստության բաշխման կատարելագործման, բանվորների աշխատավարձի բարձրացման և օրենսդրական կարգի այլ միջոցներով։ «Երբ որ իրավունքների հա-

---

15 Фердинанд Лассаль, Сочинения, т. III, М., 1925, стр. 65.

16 К. Маркс и Ф. Энгельс, Сочинения, т. 16, М., 1960, стр. 199.

17 ՍՄԿԿ Կենտկոմին կից մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական մասնաճյուղի արխիվ, Գ. Ղարաջյանի ֆոնդ («Անցյալի հիշողություններից», էջ 72)։

վասարությունը,— գրում է նա,— պայմանավորված լինի փոխադարձ շահերի պաշտպանությամբ, այն ժամանակ կվերանան սպառնալիքը, վրեժը, ատելությունը և թշվառությունը երկու դասակարգերի միջև»[18]։

«Մուրճը» բանվորական հարցի կարգավորման հնարավոր միջոցներից մեկն էլ համարում էր բանվորների սոցիալական ապահովագրությունը։ Ելնելով եվրոպական երկրների ու Ռուսաստանի փորձից, իբրև մի առաջնակարգ խնդիր հանդեսը ցանկալի էր համարում, որպեսզի երկրամասի գործարաններում ևս մտցվեն այդպիսի օրենքներ։ Հենց այդ նպատակն էին հետապնդում Հ. Հակոբյանի «Բանվորների հավաքական ապահովացումն Ռուսաստանում դժբախտ դեպքերից» և մի շարք այլ հոդվածներ։

Հեղինակը բանվորների հավաքական ապահովագրությունը դիտում է իբր «մի գեղեցիկ մարդասիրական հիմնարկություն», որը կոչված է ապահովելու բանվորների նյութականը բազմաթիվ դժբախտ պատահարներից։ Նա չնայած նկատում էր այդ ընկերությունների ներքին հակասությունները և դրանք համեմատում ակցիոներական ձեռնարկությունների հետ, բայց և այնպես այդ ընկերությունները համարում էր բանվորական հարցի կարգավորման կարևոր միջոցներից մեկը[19]։

Հանդեսը անդրադառնալով բանվորների սոցիալական ապահովության խնդիրներին, գտնում էր, որ առաջադեմ երկրներում այդ ուղղությամբ տարվող ամեն մի միջոցառում (լիներ այդ զիջում բուրժուազիայից, թե կառավարությունից) տանում է դեպի խնդրի աստիճանական լուծումը։ Այս ակնարկը Գերմանիայում կատարվող փորձերի մասին էր, ուր նոր պատմական դպրոցի ներկայացուցիչները (Շմոլլեր, Վագներ, Շտայն, Բրենտանո և ուրիշներ) երկրի ներքին տնտեսական կյանքը կարգավորելու հարցերում պետությանը վերապահում էին մեծ դեր և կարծում էին, թե առանձին բարեփոխումներով հնարավոր է հասարակական կյանքում իրագործել «սոցիալական արդարության» և «սոցիալական ներդաշնակության» սկզբունքները։ Հանդեսն ու նրա խմբագիրը հասարակական կյանքում «թռիչքներ» չէին ընդունում, այլ կանգնած էին հասարակության աստիճանական զարգացման սկզբունքի վրա։ Բանվորական հարցում «Մուրճը» նույնիսկ կշտամբում էր այն սոցիալիստներին, որոնք չունեին «կրիտիկական վերաբերմունք դեպի սոցիալիզմը» և մերժում էին այն ամենը, ինչ «զուտ սոցիալիստական հավատամքի համոզալարումից դուրս է»[20]։

Ահա թե ինչու էր վկայակոչվում Գերմանիայի օրինակը, որտեղ հարցի «լուծումը» կատարվում էր «թե՛ ինքնօգնության և թե՛ մանավանդ օրենսդրական միջոցներով»։ Առաջինի տակ նկատի էր առնվում Շուլցե-Դելիչի կոոպերատիվ միությունները, իսկ երկրորդի տակ՝ պատմական դպրոցի հռչակած «պետական սոցիալիզմը»։

Հանդեսը փորձում էր աշխատանքի և կապիտալի միջև խորացող հակասությունը տարրալուծել հենց կապիտալիստական հարաբերությունների մեջ։ Գ. Արծրունու «Հասարակական կյանքի վերանորոգություններ և ոչ թե հեղափոխություններ» հայեցակետը Արասխանյանի համար դարձավ ուղենիշ։ «Պետական օրգանները,— գրում էր նա,— պետք է բավականաչափ զգայություն ունե-

18 «Մուրճ», 1894, № 4, էջ 586։

19 Նույն տեղում, № 5, էջ 759։

20 Նույն տեղում, 1895, № 12, էջ 1451։

նան օրենսդրական կարգով ժամանակի ձայներին պատասխան տալու, հասարակական վերանորոգման գործը հեշտացնելու և վերջինս խաղաղ ճանապարհների վերա դարձնելու համար»[21]։

Ուշի-ուշով հետևելով Ռուսաստանի հեղափոխական իրադարձություններին, «Մուրճը» գտնում էր, որ բանվորները չափազանց շատ գործադուլներով անչափ վնասում են երկրի հարստությանը և առաջարկում էր՝ «ռեֆորմներ մտածել և բանվոր դասակարգը ավելի կարող, հասուն դարձնել պետական գործերի համար»[22]։ Ինչպես և պետք էր սպասել, բանվորների գործադուլային պայքարը ամսագրին հետաքրքրում էր սոսկ տնտեսական առումով։ Թեև ամսագիրը հետևում էր անցյալ դարի 90-ական թվականներին և հատկապես ռուսական առաջին հեղափոխության տարիներին Ռուսաստանում և արևմտաեվրոպական երկրներում ծավալվող բանվորական շարժումների ընթացքին, բայց չընկալեց դրանց բովանդակությունը։ Նրա խմբագիր Արասխանյանը, որը Գրիգոր Արծրունու նման բացասաբար էր արտահայտվում Փարիզի Կոմունայի մասին, չըմբռնեց նաև ռուսական առաջին հեղափոխության պատմական նշանակությունը։ Այդ տարիներին նա գտնվում էր դիտողի դերում։ «Մենք՝ ժամանակակիցներս,— ասում էր Արասխանյանը,— անընդունակ ենք չափել տեղի ունեցող երևույթների ուժն ու չափը։ Մենք շատ մոտ ենք կանգնած դեպքերին, նրանց լավ դիտելու համար անհրաժեշտ է ժամանակի հեռանկար, որ մենք չունենք։ Այ կանցնի 20—30 տարի և միայն այն ժամանակ գուցե մեզ հաջողվի ըմբռնել և ճանաչել այն, ինչ-որ այժմ տեղի է ունենում, թվում է մեզ, թե այնպես, անկապ, անսիստեմ, անծրագիր»[23]։

Այսպիսով՝ թեև «Մուրճը» տեսնում էր կապիտալիստական հասարակարգի դասակարգային ու սոցիալական աղաղակող հակասությունները, հաճախ մերկացնում տիրող հարաբերությունները, սակայն բանվորական հարցի լուծման նրա առաջարկած միջոցները լիբերալ բուրժուական գաղափարներից այն կողմ չէին անցնում։

РАБОЧИЙ ВОПРОС В ЖУРНАЛЕ «МУРЧ»

Р. Н. САРИНЯН

Резюме

Развитие капиталистических отношений в Закавказье со всей остротой поставило перед армянской общественной мыслью вопрос о новом классе — пролетариате.

Этот вопрос систематически обсуждался на страницах журнала «Мурч», где со своими статьями выступали редактор «Мурча» А. Арасханян, Г. Караджян, А. Акопян, Г. Варданян и др. Хотя журнал отмечал классовые и социальные противоречия капитализма, однако путь, предложенный им для разрешения рабочего вопроса, не выходил за рамки идей буржуазного либерализма.

---

21 Центральный грузинский исторический архив, ф. 480, оп. I, № 997.

22 «Մուրճ» ամսագրի ֆոնդ, բ. III, № 17—18։

23 ՀՍՍՀ ԳԱ տնտեսագիտության ինստիտուտի ֆոնդ, № 287։